

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարություն

2008-2010 թթ



08

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը
լի է վճռականությամբ և պատրաստ է առավելագույն ջանքեր ներդնելու
ՀՀ կառավարության հավակնոտ ծրագրերը
կյանքի կոչելու՝ ի շահ Հայաստանի և համայն հայության

ՆԵՐՍԵՍ ԵՐԻՅՅԱՆ

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության 2008-2010թթ ռազմավարությունը մշակվել է
համաձայն ՀՀ կառավարության գործունեության ծրագրի և համահունչ է ՀՀ ազգային անվտանգության
ռազմավարության երկարաժամկետ նպատակադրումներին:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

*Հայաստանը հզոր, զարգացած, հարուստ
ու մրցունակ պետություն է՝ կայուն
զարգացող տնտեսությամբ, ամենագրավիչ
երկրներից մեկն աշխարհում ինչպես,
գործարարությամբ զբաղվելու, այնպես էլ՝
սպրելու և աշխատելու համար, որտեղ
համակողմանիորեն պաշտպանվում են և
գործարարների, և սպառողների
իրավունքներն ու շահերը:*

*Հայաստանում ապահովված է
կենսապայմանների բարձր մակարդակ
յուրաքանչյուր մարդու և քաղաքացու համար:*

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ստեղծել կառավարման արդյունավետ և
թափանցիկ համակարգ՝ բաց քննարկումների և
բանավեճերի միջոցով հասարակության և մասնավոր
հատվածի հետ հետադարձ կապի ապահովման համար
Ձևավորել տնտեսության կայուն և համաչափ
զարգացման, արտադրողականության աճի համար
բարենպաստ մրցակցային միջավայր

Ստեղծել գործարար և ներդրումային բարենպաստ
միջավայր, մասնավոր հատվածին աջակցել հաջողված
և պաշտպանված գործարարությամբ ձբաղվելու
գործում

Ապահովել պետություն-մասնավոր հատված
կառուցողական համագործակցություն՝ սոցիալական
գործընկերության կատարյալ համակարգ ձևավորելու
հավակնությամբ

Երկրի մրցունակության բարձրացմանը զուգընթաց
ապահովել Հայաստանի ինտեգրումը
համաշխարհային տնտեսության մեջ

Մշակել և իրականացնել երկրի արդյունաբերական
նկարագրի ձևավորմանն ու ամրապնդմանն ուղղված
դիվերսիֆիկացված արդյունաբերական
քաղաքականություն՝ տնտեսության գերակա
ուլորտների զարգացման միջոցով

Նպաստել տնտեսական աճի որակական
փոխակերպման և արդյունավետ կառուցվածքային
տեղաշարժերի կառավարելի համակարգի
ձևավորմանը, ռեսուրսախնայող և գիտատար
տնտեսությանն անցմանը

I. ԿԱՊԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

<i>ՀՀ կառավարության գործունեության ծրագրի այն նպատակները, որոնց իրականացմանն է ուղղված սույն ռազմավարությունը</i>	<i>ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության այն նպատակները, որոնց իրականացմանն է ուղղված սույն ռազմավարությունը</i>
<ol style="list-style-type: none"> 1. Պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետության հետագա բարձրացում 2. Պետական կառավարման համակարգի ներուժի ամրապնդում 3. Կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորում 4. Տնտեսության կայուն զարգացման ապահովում 5. Ջրաղվածության ընդլայնում 6. Ակտիվ պետական տարածքային քաղաքականության իրագործում 7. Գործարար միջավայրի որակական բարելավում 8. Մտավոր սեփականության իրավունքի հուսալի և արդյունավետ պաշտպանության համակարգի ներդրում 9. Արդյունաբերական ներուժի հզորացում, արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական քաղաքականության իրականացում 10. Արտաքին տնտեսական քաղաքականության աշխուժացում 11. Սպառողների շահերի պաշտպանության համակարգի բարելավում 	<ol style="list-style-type: none"> 1. Տնտեսության կայուն աճը, 2. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, 3. Գործարարության համար առավել ազատական պայմանների ստեղծումը, 4. Աղքատության հաղթահարումը, 5. Բնակչության կենսամակարդակի հարաճույն բարձրացումը, 6. Գիտակրթական համակարգի արդիականացումը

<i>Նախարարության գործունեության ռազմավարական ուղղությունը</i>	<i>ՀՀ կառավարության գործունեության ծրագրի նպատակների հետ առնչությունը</i>	<i>ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նպատակների հետ առնչությունը</i>	<i>Նախարարության եռամյա ռազմավարության նպատակների հետ առնչությունը</i>
1. Կառավարման համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումներ	1, 2, 3, 11	-	1, 2
2. Երկրորդ սերնդի բարեփոխումների ներքո տնտեսական քաղաքականության շրջանակի ձևակերպում և տնտեսական աճի կառավարում	4, 6, 7, 10	1, 3, 5	3, 4, 7
3. Գործուն արդյունաբերական քաղաքականության ձևավորում	5, 8, 9	2, 4, 6	5, 6, 8

II. ՆՊԱՏԱԿՆԵՐ, ՍԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Նպատակ 1.* Հասարակության համար ընկալելի տնտեսական քաղաքականության իրականացում
- Նպատակ 2.* Նախարարության կողմից բարձրորակ ծառայությունների մատուցում
- Նպատակ 3.* Տարածքային զարգացման անհամաչափությունների նվազեցում
- Նպատակ 4.* Միջազգային մակարդակով մրցունակ գործարար և առևտրային պայմանների ապահովում
- Նպատակ 5.* Տեղեկատվական հասարակության կայացում
- Նպատակ 6.* Արդյունաբերության գլոբալ մրցունակության բարձրացում
- Նպատակ 7.* Բարձրարժեք ծառայություններ մատուցող ոլորտների զարգացում
- Նպատակ 8.* Գիտելիքի վրա հիմնված տնտեսության ենթակառուցվածքների ձևավորում

Նպատակ 1 . Հասարակության համար ընկալելի տնտեսական քաղաքականության իրականացում

Ելնելով ժողովրդավարական պետությանը ներկայացվող պահանջներից, ինչպես նաև սպառողների և մասնավոր հատվածի շահերից բխող համակողմանիորեն հիմնավորված որոշումների ընդունման անհրաժեշտությունից՝ նախարարությունը որդեգրել է պետություն-հասարակություն, պետություն-մասնավոր հատված ինստիտուցիոնալ համագործակցության և հետադարձ կապի ամրապնդման քաղաքականություն: Նախարարության կողմից որոշումների կայացման և քաղաքականության իրականացման գործընթացում սպառողների և մասնավոր հատվածի մասնակցության ապահովումը հնարավորություն կընձեռի հասարակության մեջ արմատավորել ապագայի նկատմամբ լավատեսություն՝ միաժամանակ բարձրացնելով յուրաքանչյուրի պատասխանատվության զգացումը պետության կառավարման և առաջընթացի գործում:

Մարտավարություն

1. սահմանել հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ հաղորդակցության և համագործակցության նոր մեխանիզմներ
2. ձևավորել քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ քննարկումների և հետադարձ կապի ապահովման մշակույթ
3. ներդնել որոշումների կայացման գործընթացում հանրային բանավեճերի կազմակերպման, հասարակության ու գործարար շրջանակների ներկայացուցիչների ներգրավման թափանցիկ համակարգ
4. մշակել և իրականացնել տեղեկատվության դասակարգման և կողավորման միասնական համակարգի ներդրման հայեցակարգ
5. մշակել պետական կառավարմանը ոչ հատուկ գործառույթներից հրաժարման առաջարկություններ և մեխանիզմներ
6. բարձրացնել նախարարության հաշվետվողականության մակարդակը

Ցուցիչներ

	<i>Փաստ</i>	<i>2008</i>	<i>2009</i>	<i>2010</i>
նախարարության կայք-էջում բաց քննարկման դրված փաստաթղթերի (նախագծերի) քանակ	0	2	4	5
ՉԼՄ-ներին կատարված աշխատանքների շուրջ լուսաբանման պարբերականություն	տարեկան	կիսամյակային	եռամսյակային	եռամսյակային

Նպատակ 2. Նախարարության կողմից բարձրորակ ծառայությունների մատուցում

Պետության զարգացման կարևորագույն նախապայման է հանդիսանում պետության արդյունավետ և հասարակական զարգացման պահանջներին համապատասխան ճկուն կառավարման համակարգի ստեղծումը, որի հիմնական նպատակն է ապահովել քաղաքացիներին պատշաճ մակարդակով ծառայությունների մատուցումը: Հաշվի առնելով, որ իր առջև դրված նպատակները նախարարությունը կարող է իրականացնել՝ ունենալով ուժեղ կադրային ներուժ, ինչպես նաև զարգացած, արդյունավետ գործող և թափանցիկ կառավարման համակարգ՝ նախարարությունը որդեգրել է համակարգի կառավարման ներուժի ամրապնդման քաղաքականություն:

Մարտավարություն

1. ապահովել արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների համատարած կիրառումը
2. ձգտել ծառայությունների մատուցման գործընթացի հնարավորինս էլեկտրոնայնացման
3. հստակ սահմանել ստորաբաժանումների գործառնությունները և դրանց ներքո վերաբաշխել աշխատակիցների լիազորությունները
4. մշակել յուրաքանչյուր ստորաբաժանման տարեկան աշխատանքային ծրագրեր և ներդնել սահմանված արդյունքների վերաբերյալ հաշվետվության և կատարողականի գնահատման համակարգ
5. ներդնել աշխատակիցների պարբերաբար վերապատրաստման և աշխատանքի կատարողականի վրա հիմնված խրախուսման համակարգեր
6. սահմանել նախարարության կողմից մատուցվող (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով մատուցվող) ծառայությունների որակի չափանիշներ ձևավորել մատուցված ծառայությունների վերաբերյալ սպառողի օպերատիվ արձագանքի ընդունման, վերլուծման և գնահատման հստակ մեխանիզմներ
7. որդեգրել հասարակական կազմակերպությունների միջոցով նախարարության գործունեության վերաբերյալ սպառողների շրջանում պարբերաբար հարցումների կազմակերպման գործելակերպ
8. ներդնել ներքին և արտաքին աուդիտ

Ցուցիչներ

	Փաստ	2008	2009	2010
էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման հավելան, %	-	20	20	20
կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների արդիականացման մակարդակ տարեկան, %	-	20	25	30

Նպատակ 3. Տարածքային զարգացման անհամաչափությունների նվազեցում

Երկրի կայուն տնտեսական զարգացման կարևորագույն խնդիրներից է հանրապետության ողջ տարածքում տնտեսության համաչափ ու համամասնորեն զարգացման ապահովումը: Տնտեսական աճի անհամաչափ բաշխման արդյունքում տարածքների զարգացման տեսանկյունից Հայաստանում առաջացել են հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ: Տարածքային համաչափ զարգացումը կարևորվում է նաև ազգաբնակչության (անկախ բնակության վայրից) սոցիալ-մշակութային հավասար հնարավորությունների ապահովմամբ: Հանրային կյանքի բարձր որակ և տարածքների բարգավաճում ապահովելը հանրապետության տնտեսական զարգացման համատեքստում առանցքային խնդիրներ են:

Մարտավարություն

1. ապահովել տնտեսության ներկա մակարդակին և զարգացման միտումներին ադեկվատ փոքր ու միջին գործարարության սուբյեկտների դասակարգման վերանայման գործընթացը և դրա ներքո.
 - ա) տարանջատել ՓՄՉ և միկրո սուբյեկտները, ընդլայնել պետական աջակցության ծրագրերի շրջանակները
 - բ) նպաստել սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրներում սկսնակ գործարարներին միկրովարկերի տրամադրման գործընթացի աշխուժացմանը
2. աջակցել Երևանում ճանաչում գտած տեղական և/կամ միջազգային բրենդերի մասնաճյուղերի հիմնմանը մարզերում
3. խթանել արդյունաբերական կլաստերների ձևավորումը և կայացումը
4. խթանել տարածքներում ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծումը՝ ծառայությունների (այդ թվում՝ ֆինանսական) ոլորտի զարգացման միջոցով
5. ապահովել տարածքներում բնության, պատմության և մշակույթի հուշարձանների շրջակայքում դրանց արդյունավետ օգտագործման զբոսաշրջային ենթակառուցվածքների (գրավչությունների) ձևավորումն ու զարգացումը
6. ստեղծել զբոսաշրջության ցանցեր տարածքներում և ապահովել դրանց ինտեգրումը միջազգային ցանցերին
7. իրականացնել պետական-մասնավոր համագործակցության տարածքային խոշոր ծրագրեր
8. աջակցել տարածքներում ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացմանը
9. ապահովել մարզերում ինովացիոն համակարգերի ձևավորում (տեխնոպարկեր, բիզնես-ինկուբատորներ, արդյունաբերական պարկեր՝ համապատասխան ենթակառուցվածքներով)
10. ապահովել կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների, էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում համայնքներում
11. մշակել և ձեռնարկել նպատակաուղղված քայլեր Երևան քաղաքից դուրս տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքի հիմնման ուղղությամբ

Ցուցիչներ

	Փաստ	2008	2009	2010
Երևանում գործող տեղական և/կամ միջազգային բրենդերի մասնաճյուղերի առկայությունը մարզերում	0	1	2	5
մարզերում հիմնված տեխնոպարկերի, բիզնես-ինկուբատորների, արդյունաբերական պարկեր, հաստ	0	1	1	2
մարզերում զբոսաշրջային գրավչության համակարգերի առկայություն, հաստ	-	1	2	3

Նպատակ 4. Միջազգային մակարդակով մրցունակ գործարար և առևտրային պայմանների ապահովում

Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայման է երկրում բիզնեսի զարգացումը: Գործարարական գործունեության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականությունն ուղղված է առավելագույնս բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի առավելագույնս պարզեցմանը, սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը: Գործարարությանն առնչվող ընթացակարգերն իրենց պարզությամբ և թափանցիկությամբ դեռևս հեռու են բավարար լինելուց:

Մարտավարություն

1. առաջնորդել վարչարարական ընթացակարգերի պարզեցման և հստակեցման գործընթացը
2. աջակցել գործարար ենթակառուցվածքների զարգացման և կադրերի վերապատրաստման գործընթացներին
3. ապահովել խոր գործունային հետազոտություններ և նախաձեռնել ՀՀ և այլ երկրների ու տնտեսական միությունների (մասնավորապես՝ ԵՄ) հետ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրման բանակցություններ
4. ապահովել պետություն-մասնավոր հատված համագործակցության գործուն համակարգի աշխատանքը
5. բացահայտել փոքր և միջին ձեռնարկատիրությանն պետական աջակցության արդի մեխանիզմները
6. ապահովել որակի հսկողության, ստանդարտացման, համապատասխանության հավաստման և սերտիֆիկացման համակարգերի լիարժեք համապատասխանությունը միջազգային չափանիշներին
7. ապահովել տնտեսության մեջ տեխնիկական անվտանգության և սպառողների շահերի պաշտպանության ժամանակակից համակարգերի ներդրումը

Ցուցիչներ

	<i>Փաստ</i>	<i>2008</i>	<i>2009</i>	<i>2010</i>
«Գործարարությամբ զբաղվելը» (տեղը) համաթիվ	39	35	30	25
կնքված ազատ առևտրի համաձայնագրերի քանակ, հատ	9	9	11	12

Նպատակ 5. Տեղեկատվական հասարակության կայացում

Հայաստանի՝ որպես զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ ունեցող տարածաշրջանային և համաշխարհային նշանակության երկրի նկարագրի ձևավորումը, Հայաստանում տեղեկատվական հասարակության կայացումը կարևորվում է երկրի ընդհանուր տնտեսության արտադրողականության աճի, համաշխարհային տնտեսության մեջ մրցունակության պահպանման, գիտելիքահենք տնտեսության կայացման նախադրյալների ապահովման, պետական քաղաքականության մշակմանը հասարակության ներգրավվածության ապահովման, պետություն-հասարակություն, պետություն-մասնավոր հատված ինստիտուցիոնալ համագործակցության և հետադարձ կապի ստեղծման, կոռուպցիոն ռիսկերի նվազման տեսանկյունից:

Մարտավարություն

1. ապահովել SS ոլորտի զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման ծրագրային հենքը
2. աջակցել Հայաստանի ողջ տարածքով էլեկտրոնային հաղորդակցության ցանցի և ինտերնետային ելքի մատչելիության և հասանելիության ապահովմանը,
3. իրականացնել հասարակության էլեկտրոնային գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումներ
4. քաջալերել ոլորտի միջազգային հեղինակավոր ընկերությունների մուտքը, բացահայտել համագործակցության նոր ոլորտներ
5. օժանդակել էլեկտրոնային միջոցներով բնակչությանը տարաբնույթ ծառայությունների (էլ-կրթություն, էլ-առողջապահություն, էլ-առևտուր և այլն) մատուցման և հասանելիության ապահովմանը
6. խրախուսել տնտեսության այլ ճյուղերում տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների ներդրումը
7. աջակցել էլեկտրոնային կառավարման բարձր/միջազգային մակարդակի համակարգերի ներդրման ապահովմանը
8. աջակցել հանրակրթական համակարգում անգլերեն և ռուսերեն լեզուների լիարժեք տիրապետման ապահովման գործընթացին
9. իրականացնել տնտեսություն-գիտություն, գիտություն-համալսարաններ կապերի ընդլայնման խրախուսման միջոցառումներ

Ցուցիչներ

	Փաստ	2008	2009	2010
միջազգային հեղինակավոր ընկերությունների քանակ, հատ	10	11	13	15
բնակչության ինտերնետ հասանելիություն (ֆիզիկական, ֆինանսական և բովանդակային), %	10	15	20	30
կրթական հաստատությունների համակարգային հագեցվածություն (ուսումնական գործընթացում կիրառվող), %	10	20	40	60

Նպատակ 6. Արդյունաբերության գլոբալ մրցունակության բարձրացում

Հայաստանը ինդուստրիալ ուղղվածություն ունեցող երկիր դարձնելու քաղաքականությունը պահանջում է կառավարման ժամանակակից մոդելների, ինովացիոն արդյունքի կիրառման համակարգերի ներդրում՝ արդի, մրցունակ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև մարդկային կապիտալի շարունակական զարգացման ապահովմամբ: Որդեգրած քաղաքականության արդյունքում հանրապետությունում կձևավորվի արտահանման ուղղվածություն ունեցող զարգացած արդյունաբերական համակարգ, որը կխթանի միջազգային ստանդարտներին համապատասխան ապրանքների թողարկումը, նոր արտաքին շուկաների ընդլայնումը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

Մարտավարություն

1. մշակել և իրականացնել հանքարդյունաբերության և քիմիայի ոլորտների կլաստերային զարգացման քաղաքականություն
2. նախանշել և առաջնորդվել ակնագործության և ոսկեգործության բնագավառների զարգացման որակապես նոր և արդիական մոտեցումներով
3. խթանել տեխնոլոգիական արդիականացման գործընթացները, նպաստել արտադրանքի վերամշակման խորացմանը
4. քաջալերել միջազգային ճանաչում և առաջատար կառավարման հմտություններ ունեցող, տեխնոլոգիաներ տարածող ընկերությունների (ներառյալ սփյուռքի հայ գործարարների) մուտքը
5. օժանդակել ներքին ռեսուրսների վերամշակման և օտարերկրյա ներդրումների հետ կապված մրցունակ արտադրությունները
6. նպաստել արդյունաբերությունում արտադրողականության բարձրացմանը՝ խրախուսելով տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներդրումը
7. կատարելագործել փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մեխանիզմները՝ հիմքում դնելով ծրագրային մոտեցումներ ըստ զարգացման առաջնահերթությունների
8. ապահովել տնտեսություն -գիտություն- կրթություն սերտ համագործակցություն և հետադարձ կապ
9. աջակցել կապիտալի շուկայի զարգացմանն ու կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանը

Ցուցիչներ

	Փաստ	2008	2009	2010
ՀՆԱ կառուցվածքում արդյունաբերության տեսակարար կշիռ, %	15.7	14.3	13.5	14
ներմուծման կառուցվածքում սարքավորումների և տեխնոլոգիաների մասնաբաժին,%	14.9	16	16.5	17
արտահանման կառուցվածքում գիտատար ապրանքատեսակների մասնաբաժին,%	7.3	8.5	9.0	9.5

Նպատակ 7. Բարձրարժեք ծառայություններ մատուցող ոլորտների զարգացում

Տնտեսության զարգացման երկարաժամկետ նպատակադրումների ներքո բարձրարժեք և գիտատար ծառայությունների աճը տնտեսության կառուցվածքային ճիշտ փոխակերպման նախապայման է: Հայաստանում դրանք պայմանավորված են ֆինանսական, խորհրդատվական, բժշկական և զբոսաշրջային միջազգային մակարդակով մրցունակ ծառայությունների մատուցմամբ: Տնտեսական զարգացման նպատակադրումները պահանջում են բարձրարժեք ծառայությունների տեսականու էապես ավելացում, որոնց որակը կհամապատասխանի միջազգային չափանիշներին:

Մարտավարություն

1. ապահովել որակյալ հետազոտություններ զարգացման ներուժ ունեցող ծառայությունների գերակա տեսակների (զբոսաշրջություն և դրան սպասարկող ծառայություններ, ֆինանսական, բժշկական, կրթական) և նպատակային շուկաների բացահայտման ուղղությամբ
2. նկարագրել կրթական ծառայությունների առևտրայնացման գործընթացը և մշակել հստակ առաջարկություններ համակարգի կայացման նպատակով
3. օժանդակել միջազգային մակարդակով մրցունակ ֆինանսական միջնորդությունների ընդլայնմանը և յուրահատուկ բժշկական ծառայությունների զարգացմանը
4. ձևավորել Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագիրը և պատշաճ ներկայացնել միջազգային շուկայում
5. զարգացնել զբոսաշրջային ենթակառուցվածքները (այդ թվում՝ հյուրատնային ցանցի ձևավորում և գործունեության զարգացում, հյուրանոցային բրենդերի ներգրավում)
6. ապահովել զբոսաշրջային ծառայությունների բարձր որակը, հայկական երկինք ցածր գներով ավիափոխադրողների մուտքը խրախուսող պայմաններ
7. ձևավորել նոր, մրցունակ զբոսաշրջային ուղղություններ

Ցուցիչներ

	<i>Փաստ</i>	<i>2008</i>	<i>2009</i>	<i>2010</i>
ՀՆԱ կառուցվածքում ծառայությունների տեսակարար կշիռ, %	32.5	34	36	40
Հայաստան զբոսաշրջային այցելությունների քանակ, հազ.մարդ	510.2	600	700	800
միջազգային հյուրանոցային բրենդերի առկայություն	1	2	3	5

Նպատակ 8. Գիտելիքի վրա հիմնված տնտեսության ենթակառուցվածքների ձևավորում

Տնտեսության մեջ ցածր արտադրողականություն և շահագործման արդյունավետություն, ինչպես նաև բարձր էներգատարություն ունեցող ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինելու գործընթացը պայմանավորված է նոր տիպի տնտեսություն կառուցելու կարողությամբ: Ռեսուրսատար վարքագծից ձեռքագատվելու նպատակադրման ներքո պարզ սպառմանն ուղղված արդյունք արտադրելու համար տեխնոլոգիաների ներմուծումից պետք է անցում կատարվի տեխնոլոգիապես հասուն արդյունաբերության: Գլոբալ զարգացումներին համընթաց երկրում գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքների զարգացումը արտադրողականության համընդհանուր աճի և գիտելիքահենք տնտեսության կայացման նախապայման է:

Մարտավարություն

1. ձևակերպել գիտելիքահենք տնտեսության սկզբունքները և նկարագրել համապատասխան ենթակառուցվածքների համակարգը
2. սահմանել գիտական արդյունքի առևտրայնացման ինստիտուցիոնալ հիմքերը
3. նախանշել հետազոտությունների և զարգացումների ֆինանսավորման գործուն մեխանիզմները և աղբյուրները
4. ապահովել մտավոր սեփականության պաշտպանության համակարգի բարձր արդյունավետությունը
5. խորացնել միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Մայքրոսոֆթ, Սան Մայքրոսիսթեմս, Նեյշնլ Ինսթրումենթս և այլն) հետ համագործակցության աստիճանը
6. աջակցել վենչուրային հիմնադրամների ստեղծմանն ու կայացմանը՝ նախաձեռնելով առնվազն մեկ վենչուրային հիմնադրամի ստեղծում
7. ապահովել ՏՏ և հարակից մասնագիտական կրթական համակարգի և ոլորտի իրական հատվածի միջև հետադարձ կապը
8. աջակցել բիզնես դպրոցների ձևավորմանն ու դրանցում արդի ուսումնական ծրագրերի իրականացմանը (պրոֆեսիոնալ հաշվապահական, ֆինանսական կառավարման և այլն)
9. աջակցել մասնագիտական և լրացուցիչ կրթության ոլորտում եվրոպական կրթական տարածքին ինտեգրման, հեռահար ուսուցման համակարգի ներդրման գործընթացներին
10. աջակցել կենսաթոշակային բարեփոխումների և ապահովագրական համակարգի կայացման գործընթացին

Ցուցիչներ

	<i>Փաստ</i>	<i>2008</i>	<i>2009</i>	<i>2010</i>
գործող վենչուրային հիմնադրամ, հատ հետազոտությունների և մշակումների վրա	0	0	1	1
կատարված ներքին ծախսեր, ՀՆԱ, %	0.2	0.2	0.3	0.3
Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության միջազգային բյուրո առաքված գյուտերի և օգտակար մոդելների միջազգային հայտերի (PCT) քանակ, հատ	49	52	56	60